յերկրորդ գլխավոր կեդրոնն եր Վայոց ձորում։ Մեզ թվում ե, թե Մոզը և սորա հանդիպակաց, Արփայի ձախ կողմի լերան փեշերը Մարտիրոս գետակով մինչև համանուն գյուղը, և այնտեղից Սեւ, Շահապունյաց գավառը եղերող բարձունքները՝ Աղխաչ և Կորադիս գյուղերով, Պռոշյանց սեպհականությունն եր, ինչպես կտեսնենք, ամբողջ Շահապունիքի հետ * ։

Մարտիրոս գյուղը շինել ե Մխիթար Դեղկո վորդին 1283 թ. Պռոշ իշխանի և նորա վորդի Ամիր Հասանի հրամանով, կանգնելով մի բարձր խաչքար գյուղի աղբյուրի մոտ (պատկ. 11. Հավել. Ա. 7)։ Կան և ուրիշ յեկեղեցիներ, խաչքարեր և արձանագրություններ, վորոնք ցույց են տալիս, թե վոչ միայն Մարտիրոսը, այլ և նույնանուն գետակի հովիտը պատկանում եր նրանց, վորոնց մասին խոսք կլինի յուր տեղում։ Մարտիրոսից դեպի հյուսիս—արևելք Գյոմյուր վտակի հովիտն ե նույնանուն գյուղով, վոր Ալիշանը նույնացնում ե Որբելյանի Գոմոց անվան հետ **, իսկ ավելի հարավ-արևելքից, Ծղկո կամ Սիսիանի անջրպետ կազմող լեռներից սկիզբն առնելով և գորանալով Զուլունդաղի ակունքներով, անցնում ե Զուլ գետակը, վորի ափին ե համանուն գյուղը՝ և քիչ հեռու՝ մոտ յերկու վերստ, Մարաթյուս, հին Աջողքն ու Մայրատուրքն ըստ Ալիշանի [1]։ Գյոմյուրում Խոյդանա վորդի Մխիթար և կինը Արևիկ կանգնել են մի հոյակապ խաչ մատուռով «ի թվ. Հ. ՉԺԲ (=1263) բարեպաշտ իշխանութեան Պռոշո» (պատկ. 12. Հավել. Ա. 8). Գյոմյուրի հանդեպ վտակի աջ ափին, Գյառըդ գյուղն ե (Ներքին և Վերին Ախտա, ըստ Ալիշանի՝ Որբելյանի ցուցակի Աղթարոյնք), ուր մի քանի խաչքարեր կան Պռոշի և նորա վորդու Ամիր Հասանի անունների հիշատակությամբ։ Զուլում և Մարաթյուսում Պռոշյանց անմիջական յիշատակներ չեն մնացել, բայց նոքա այնպիսի միություն են կազմում վերոյիշյալ վտակների հետ, վոր ուրիշ իշխանության մաս կազմել չեյին կարող։ Զուլի յեկեղեցին շինած ե կամ նորոգված ԺԸ. դարու սկզբին՝ «շինեցաւ եկղցս թվ֊ ռճծր», բայց արևելյան պատի լուսամուտի գլխին մի եղծված արձանագրություն կա «թվ. Զ..». թվականն ունեցել ե տասնավոր կամ միավոր. յեղծված ե մի տառի տեղ։ Հնության ավելի հետքեր ունի Մարաթուսը. յեկեղեցին շինված ե վտակի ափին. աղբյուրն էլ բղխում ե հենց յեկեղեցու պատի տակից, հյուսիսից նկատվում են ջրանցքի հետքեր, վոր կարոտ են հատուկ քննության, տաշած քարերից նավ շինած և վերան էլ ծածկած, ինչպես Անիում։ Փոքրիկ յեկեղեցու արևելյան լուսամուտի գարնեզի գըլ-

Խաչքար Մարտիրոս գյուղում. Պ ա տ կ ե ր 11. (Հավել. Ա. 7).

խին մի բարձրաքանդակ արծիվ կա, կողքերից ցուլի և առյուծի գլուխներով (պատկ. 13), վոր Պռոշյանց ուրիշ հուշարձանների վերա էլ յերևան ե գալիս, ինչպես Ներքին Ախտայի կամ Գյոմյուրի խաչարձանի տակ, շղթայված առյուծն ու յեզը։ Մի ուրիշ ավելի ընդարձակ սագաշեն յեկեղեցու պատերի մեջ հագցրած են խաչքարեր, դոցանից մեկի յերկու կողմից մի մի յերկարազգեստ անձի բարձրաքանդակ, գոտին մեջքներին, ձեռքերին խաչ և վոտներին կոշիկ, վորոնց լուսանկարը, տարաբաղդաբար, չունինք։ Մի ուրիշ՝ դարձյալ պատին հագցրած՝ խաչքարի վերա նկատվում ե «ՉԾԳ» թվականը. հարավային պատի ՉՀԳ թվականով խաչքարն ունի արձանագրություն, բայց դժվարընթեռնլի։ Մատուռը ներսից և դրսից շինված ե սրբա-

* Կորադիսը գրեթե նույնահնչյուն ե Որբելյանի ցուցակի Կորատունք անվան հետ, իսկ Աղխաչը կարող ե կրճատումն լինել Ճահուկի Աղբերխաչի, մանավանդ Թուրքերի բերանում։ Կորադիսում գերեզմանական արձանագրություններին նայելով՝ բնակչությունը հայ ե յեղել, վորոնց փոխարինել են մահմեդականները. ապա ԺԹ. դարու պարսկահայոց մեծ գաղթականության ժամանակ՝ դարձյալ հայերի ձեռքն ե անցել գյուղը։ Աղխաչում կա ընդարձակ գերեզմանատուն շատ արձանագրություններով, ինչպես և յեկեղեցու պատերի մեջ հաստատած խաչքարեր, ամենահինը 1515 թ., իսկ նորը 1715։ Արձանագրությունները տ. Հավել. Ա. 6։

** Սիսական 175։

[1] Սիսական 108։